ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄԿՈՒՍԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ԿՈՐԾԱՆԻՉ ԳՈՒՄԱՐՏԱԿՆԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԵՎ ՆՐԱՆՑ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ (1941—1945 թթ.)

Հ. Հ. ՇԱՏՎՈՐՅԱՆ

Հայրենական մեծ պատերազմի առաջին իսկ օրերին ՀԱՄԿ(բ)Կ Կենտկոմը և սովետական կառավարությունը անհապաղ գործնական միջոցառումներ մշակեցին երկիրը միասնական մարտական ճամբարի վերածելու, կարմիր բանակի թիկունքի ամրապնդման, թշնամու լրտեսների, դիվերսանտների, պարաշյուտային դեսանտների դեմ կազմակերպված պայքար մղելու համար։ 1941 թ. հունիսի 24-ին ՀԱՄԿ(բ)Կ Կենտկոմը և ՍՍՀՄ Ժողկոմսովետը որոշում կայացրին «Մերձճակատային շրջաններում թշնամու պարաշյուտային դեսանտների և դիվերսանտների դեմ պայքարի միջոցառումների մասին»[1], որը լայն արձագանք գտավ ողջ երկրում։

Դրան համապատասխան՝ Անդրկովկասյան ռազմական օկրուգի ռազմական խորհուրդը 1942 թ. հունիսի 25-ին որոշում կայացրեց օկրուգի տարածքում կործանիչ գումարտակներ ստեղծելու մասին։ ՀՍՍՀ ՆԳԺԿ-ի անմիջական մասնակցությամբ հանրապետության քաղաքներում և շրջաններում կազմակերպվեցին կործանիչ գումարտակներ։ Նրանց աշխատանքը համաձայնեցնելու նպատակով ստեղծվեց օպերատիվ շտաբ, որի պետ նշանակվեց գնդապետ՝ Լ. Գ. Կարապետյանը, տեղակալ՝ կապիտան Գ. Հ. Միքայելյանը[2]։ ՀԿ(բ)Կ Կենտկոմը կուսակցության քաղաքային և շրջանային կոմիտեներին պարտավորեցրեց առանձնացնել կուսակցական փորձված աշխատողների՝ գումարտակների անձնակազմի հավաքագրմանը անմիջական մասնակցություն ցույց տալու համար։

ՀԿ(բ)Կ քաղաքային և շրջանային կոմիտեները հատուկ քննարկման առարկա դարձրին կործանիչ գումարտակների կազմակերպման և դրանց ղեկավար կազմի, ուսումնավարժական բազայի հարցերը։ Նշանակվեցին և ՀԿ(բ)Կ Կենտկոմի կողմից հաստատվեցին կործանիչ գումարտակների հրամանատարները։ Քաղաքային և շրջանային կոմիտեները հաստատեցին գումարտակի հրամանատարների տեղակալներին և վաշտի հրամանատարներին։ Կործանիչ գումարտակներ ուղարկվեցին փորձված կոմունիստներ, սովետական, արհմիութենական, կոլտնտեսային ակտիվիստներ, նախկին պարտիզաններ։ Պաշտպանության կենտրոնական, քաղաքային ու շրջանային խորհուրդները կործանիչ գումարտակներ ուղարկեցին իրենց հրամանատարական

---

1 «История Великой Отечественной войны Советского Союза 1941—1945 гг.», М., 1961, т. 2, стр. 231.

2 *ՄԼԻ հայկական մասնաճյուղի արխիվ (այսուհետև՝ ՄԼԻ արխիվ), ֆ. 1, ց. 29, գ. 53, թ. 92։*

կազմի զգալի մասը։ Կործանիչ գումարտակների մեջ ընդգրկվեցին նաև պահեստի բազմաթիվ սպաներ։

Կործանիչ գումարտակներն իրենց աշխատանքները կազմակերպում էին ՀՍՍՀ ՆԳԺԿ-ի անմիջական ղեկավարությամբ։ Կարճ ժամանակում հանրապետության քաղաքներում ու շրջաններում ստեղծվեցին բազմաթիվ կործանիչ գումարտակներ ու ջոկատներ։ Երևանում դրանց մեջ ընդգրկվեց 4.809, Լենինականում՝ 500, Կիրովականում՝ 200 հոգի։ Հանրապետության կործանիչ գումարտակների մեջ էր ընդգրկված 9.507 հոգի (այդ թվում՝ 700 պարաշյուտիստներ)[3]։

Կուսակցական կոմիտեները կործանիչ գումարտակների մարտիկների շրջանում քաղաքական-մասսայական աշխատանքների ղեկավարման համար առանձնացրին քաղաքական աշխատանքի փորձ ունեցող կոմունիստների, որոնք գումարտակի հրամանատարի հետ աշխատում էին անձնակազմի համալրման, ուսումնավարժական անհրաժեշտ ձեռնարկների հայթայթման, մարտական և քաղաքական ուսուցման կազմակերպման ուղղությամբ։ Թիկունքի ամրապնդման գործում կարևոր նշանակություն ունեցավ ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության 1941 թ. հուլիսի 6-ի հրամանագիրը «Պատերազմի ժամանակ բնակչության շրջանում տագնապ առաջացնող կեղծ լուրեր տարածելու համար պատասխանատվության ենթարկելու մասին»[4]։ Այն գոհունակությամբ ընդունվեց աշխատավորության կողմից և մեծ նշանակություն ունեցավ ժողովրդի զգոնության բարձրացման ու տագնապ առաջացնող կեղծ լուրեր տարածողների դեմ պայքար կազմակերպելու համար։

Կործանիչ գումարտակների առջև պատասխանատու խնդիրներ էին դրված. նրանք պետք է պայքարեին փորձված և վտանգավոր թշնամու դեմ։ Ուստի կործանիչ գումարտակներից պահանջվում էր լինել զգոն և գործել անհապաղ։ Կործանիչ գումարտակների գործունեությունը առավել արդյունավետ դարձնելու նպատակով, ՀամԿ(բ)Կ Կենտկոմի որոշմամբ, նրանց ցուցումները և հրամանները պարտադիր դարձան կուսակցական, սովետական և հասարակական կազմակերպությունների համար[5]։

Խիստ կարևոր նշանակություն ուներ արդյունաբերական ձեռնարկությունների, կամուրջների և այլ օբյեկտների պաշտպանությունը։ ՀԿ(բ)Կ Կենտկոմը 1941 թ. օգոստոսի 23-ին որոշում ընդունեց կարևորագույն արդյունաբերական օբյեկտների պահպանության մասին։ Այդ որոշմանը համապատասխան՝ ՀԿ(բ)Կ քաղաքային և շրջանային կոմիտեները ՀՍՍՀ ՆԳԺԿ-ի և ՊԱԺԿ-ի քաղաքային և շրջանային բաժինների հետ միջոցառումներ մշակեցին ռազմա-արդյունաբերական և այլ կարևոր օբյեկտների պաշտպանությունն ուժեղացնելու համար։ Այդ նպատակով մտցվեց ռազմականացված պահակություն և անցագրային կարգ։ Հանրապետության ՆԳԺԿ-ին կից ստեղծվեց կարևորագույն օբյեկտների պահպանության բաժին, որը սերտ կապի մեջ էր կործանիչ գումարտակների միավորման շտաբի հետ[6]։ Կարևոր նշանակություն ունեցող օբյեկտներում, ինչպես նաև թշնամու դեսանտի հավանական

---

3 ՄԼԻ արխիվ, ֆ. 4033, ց. 6, գ. 122բ, թ. 8։

4 «Известия», 8.VII.1941.

5 ՄԼԻ արխիվ, ֆ. 1, ց. 30, գ. 28, թ. 95։

6 ՄԼԻ արխիվ, ց. 29, գ. 318, թ. 103։

վայրէջքի վայրերում ստեղծվեցին շուրջօրյա դիտակետեր։ Երևան, Լենինական և Կիրովական քաղաքներում դիտակետեր էին ստեղծվել նաև արդյունաբերական թաղամասերում։ Նրանց անձնակազմը բաղկացած էր տեղանքին լավ ծանոթ 3—5 մարդուց։

Կուսակցական օրգանների անմիջական մասնակցությամբ անցկացվող այս միջոցառումների շնորհիվ արմատապես բարելավվեց հասարակական կարգի պաշտպանությունը, ամրապնդվեց պայքարը թիկունքի կազմալուծիչների, կեղծ լուրեր տարածողների, դասալիքների և թշնամական այլ տարրերի դեմ։

Կործանիչ գումարտակները զգալի ժամանակ էին հատկացնում աշխատանքից հետո ռազմական ուսուցմանը՝ 80 ժամյա ծրագրով, շաբաթական 3 օր, 4-ական ժամ տևողությամբ։ Գյուղական վայրերում, ելնելով աշխատանքի բնույթից, կործանիչ գումարտակների մարտիկների ուսուցումը կատարվում էր արտադրությունից կտրված։ Պարապմունքների ընթացքում ուսումնասիրվում էին հրացանի, ձեռքի նռնակի գործածության ձևերը, անցկացվում էին շարային, սվինամարտի պարապմունքներ և տակտիկական վարժություններ, որոնց ընթացքում կործանիչ գումարտակների մարտիկները սովորում էին թշնամու պարաշյուտային դեսանտների, դիվերսանտների և լրտեսների դեմ պայքարի ձևերն ու մեթոդները։

Հանրապետության կործանիչ գումարտակների միավորման շտաբին կից գործում էին պարաշյուտիստների դասընթացներ։ Բացի պարաշյուտային թռիչքի տեխնիկայի ուսուցումից, նրանք գիտելիքներ էին ստանում պայթեցման գործի, զենքի տեսակների, հետախուզության և ռազմական այլ մասնագիտությունների մասին[7]։ 1942—1943 թթ. Կովկասի պաշտպանության հերոսական օրերին, Անդրկովկասյան ռազմաճակատի հրամանատարության կարգադրությամբ, Հայաստանի կործանիչ գումարտակների միավորման շտաբի պարաշյուտիստների զգալի մասը մեկնեց ռազմաճակատ և ակտիվորեն մասնակցեց Հյուսիսային Կովկասի ազատագրման մարտերին։

Ամենօրյա լարված աշխատանքի շնորհիվ կործանիչ գումարտակները դարձան քաղաքականապես կոփված, մարտունակ և կազմակերպված միավորումներ։ Նրանք մշտապես գտնվում էին մարտական պատրաստության վիճակում։ Կովկասի համար մղվող կատաղի ճակատամարտերի օրերին ուժեղացավ թշնամու՝ Անդրկովկաս ներխուժելու վտանգը։ Այդ կապակցությամբ ՀԿ(բ)Կ Կենտկոմը 1942 թ. սեպտեմբերի 22-ին քննարկեց ՍՍՀՄ ՆԳԺԿ-ի՝ «Թշնամու կողմից Հայկական ՍՍՀ ուղարկվող դիվերսանտների ու հետախուզների պարաշյուտային խմբերի դեմ պայքարի ուժեղացման մասին» դիրեկտիվը և մշակեց կոնկրետ միջոցառումներ[8]։ Կենտկոմի բյուրոն կուսակցության քաղաքային և շրջանային կոմիտեներին, սկզբնական կուսակցական կազմակերպություններին պարտավորեցրեց էլ ավելի ուժեղացնել բնակչության շրջանում տարվող բացատրական աշխատանքները, սահմանել շուրջօրյա հերթապահություն և օդի դիտումներ։

ՀԿ(բ)Կ քաղաքային և շրջանային կոմիտեները, սկզբնական կուսակցական կազմակերպությունները հատուկ քննարկման առարկա դարձրին պաշտ-

---

7 «Հուշեր մեծ հայրենականից», Երևան, 1968, էջ 27։

8 Մշի արխիվ, ֆ. 46, ց. 5, գ. 190, թ. 138։

պանական աշխատանքների ուժեղացման հարցը և մշակեցին կոնկրետ միջոցառումներ։ ՀԿ(բ)Կ Կենտկոմը կործանիչ գումարտակների աշխատանքների ղեկավարման գործում, կուսակցության շրջանային կոմիտեներին գործնական օգնություն ցույց տալու նպատակով, հանրապետության շրջաններ գործուղեց Կենտկոմի անդամներին։ Նրանք հանդես էին դալիս շրջկոմների պլենումների նիստերում, կուսակցական դռնփակ ժողովներում, ակտիվի խորհրդակցություններում՝ համախմբելով աշխատավորության ուժերը թշնամու դեմ պայքարելու համար։

1942 թ. սեպտեմբերի 25-ին կուսակցության Հոկտեմբերյանի շրջկոմը քննարկեց «Թշնամու պարաշյուտիստների և դիվերսանտների դեմ պայքարի ուժեղացման մասին» հարցը։ Պլենումի նիստին մասնակցում էր ՀԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղար Ս. Ա. Միքայելյանը։ Պլենումը մշակեց կոնկրետ միջոցառումներ բնակչության շրջանում ագիտացիոն-բացատրական աշխատանքների բարելավման, զգոնության բարձրացման և թշնամու դիվերսանտների ու պարաշյուտիստների դեմ պայքարի ուժեղացման մասին[9]։ Հոկտեմբերի 3-ին այդ հարցը քննարկեց կուսակցության էջմիածնի շրջկոմը, որը սկզբնական կուսակցական կազմակերպություններին և հիմնարկ-ձեռնարկությունների ղեկավարներին պարտավորեցրեց մեկ օրվա ընթացքում կարգի բերել քաղաքացիական հակաօդային պաշտպանության միջոցները՝ ռմբապաստարաններն ու դաշտային տիպի ապաստարանները։ Մարտական պատրաստության մեջ դրվեցին գրոհող ջոկատներն ու կործանիչ գումարտակը[10]։

Սկզբնական կուսակցական կազմակերպությունները դռնփակ ժողովներում քննարկում էին ստեղծված իրադրության պայմաններում իրենց խնդիրները և մշակում կոնկրետ միջոցառումներ։ Հանրապետության մամուլը, ռադիոն, մասսայական պրոպագանդայի բոլոր օրգանները ուժեղացրին քաղաքական աշխատանքը բնակչության շրջանում։ Այդ օրերին կազմակերպվող զրույցները, զեկուցումներն ու դասախոսություններն աշխատավորության զգոնության բարձրացման և նրանց ուժերի համախմբման նպատակ էին հետապնդում։ Աշխատավորությանը բացատրվում էին այն մեթոդներն ու ձևերը, որոնցից օգտվում էին թշնամու՝ մեր երկիր թափանցած գործակալները, բերվում էին կոնկրետ օրինակներ։ Գործնական աշխատանք կատարվեց լուսաքողարկման կանոնների և անձնագրային կարգի պահպանման ուղղությամբ։ Բարձրացվեց դիտակետերի հերթապահների զգոնությունը և պատասխանատվությունը։ Նրանց համար մշակվեց պարտականությունների կատարման հատուկ հրահանգ։

ՀԼԿԵՄ Կենտկոմի նախաձեռնությամբ ստեղծված կոմերիտական-երիտասարդական դրուժինաները ակտիվ մասնակցություն ու օգնություն էին ցույց տալիս կործանիչ գումարտակներին հասարակական կարգի պահպանման հերթապահություններ և օդի դիտումներ կատարելու գործում։ Նրանք հանդիսանում էին կործանիչ գումարտակների հենարանը և ռեզերվը։

Կուսակցական կազմակերպությունների անցկացրած միջոցառումների շնորհիվ հանրապետության բնակչությունը պատրաստ էր դիմագրավելու ամեն մի անակնկալի։ Հանրապետության տարածքը դարձել էր պաշտպանական

9 ՄԼԻ արխիվ, ֆ. 1, ց. 31, գ. 37, թ. 137։
10 ՄԼԻ արխիվ, ֆ. 14, ց. 2, գ. 107, թ. 77։

ամրոց։ Այդ օրերին կործանիչ գումարտակների պաշտպանությանն էին հանձնվել նանապարհների, լեռնանցքների, կամուրջների մոտ ստեղծված վերահսկող-բացթողնող կետերի պաշտպանությունը, որոնք ստուգում էին բնակավայրեր մտնող կամ մեկնող անձանց փաստաթղթերը, գուժային և ավտոտրանսպորտի ուղեդրերը։

Ռազմաճակատ մեկնելու կապակցությամբ կործանիչ գումարտակների անձնակազմը համալրվեց կուսակցական, կոմերիտական և սովետական նոր աշխատողներով, այդ թվում նաև կանանցով։ Զգալիորեն ավելացվեց կործանիչ գումարտակների սպառազինությունը։ Բացի պաշրավիաքիմի կազմակերպություններից ստացած մարտական հրացաններից և ձեռքի գնդացիրներից, Անդրկովկասյան ռազմական օկրուգի հրամանատարությունը ևս մեծ քանակությամբ հրացաններ հատկացրեց կործանիչ գումարտակներին զինելու համար։ 1942 թ. Հայաստանի կործանիչ գումարտակներին հատկացվել էր 8.000 հրացան, որոնցից 7.000-ը «մաուզեր» սիստեմի, 50 և 82 մմ տրամաչափի 18 ականանետ, 40 հաստոցավոր ու ձեռքի գնդացիր և այլն[11]։

Հայաստանի կործանիչ գումարտակների միավորման շտաբի նախաձեռնությամբ տեղական հումքի բազայի վրա կազմակերպվել էր ձեռքի նռնակների և մի քանի տեսակի ռազմամթերքների արտադրություն։ Օպերատիվ շտաբի պետի օգնական, ինտեխնիկ Ա. Ա. Ալեքսանյանի նախագծով պատրաստված ՊՈ—Գ—42 նռնակը ստացել էր «պարտիզանական» անունը։ Պատրաստվում էին ականներ, վառվող հեղուկով շշեր, թռչող ականներ և ավիացիոն ռումբեր[12]։

Կործանիչ գումարտակներին հատկացվել էին ձիեր, բեռնատար ավտոմեքենաներ, հեծանիվներ։ Միավորման շտաբի տրամադրության տակ էր գրվել նաև պաշրավիաքիմի կենտրոնական խորհրդի ավիացիան (7 ինքնաթիռ), որը ակտիվ մասնակցում էր տակտիկական պարապմունքներին, կատարում հետախուզություն, դիտումներ։ Այդ ինքնաթիռներն օգտագործվում էին նաև որպես կապի միջոց[13]։ Տեղանքի և օդի դիտումները կատարում էին գյուղական ակտիվիստները, անտառտնտեսություններում և խոտհարքներում աշխատողները։ Հատուկ հսկողության տակ էր առնված Սևանա լճի մակերեսը, որը կարող էր դառնալ թշնամական-օդային դեսանտի իջեցման վայր։

Կործանիչ գումարտակներն ինքնամփոփ միավորումներ չէին, նրանք սերտ կապերի մեջ էին Հայաստանում տեղակայված զորամասերի հետ։ Հանրապետությունում տեղակայված բանակի ստորաբաժանումները մասնագիտական օգնություն էին ցույց տալիս կործանիչ գումարտակներին տակտիկական պարապմունքների և ռազմական տեխնիկայի ուսուցման գործում։ Կործանիչ գումարտակների հրամանատարական կազմի համար զինվորական մասերում կազմակերպվում էր հատուկ ուսուցում՝ թշնամու լրտեսների և դիվերսանտների դեմ պայքարի ձևերի մասին։ Կործանիչ գումարտակների և զորամասերի հրամանատարությունը մշակել էր մարտական գործողությունների համատեղ պլան՝ թշնամու պարաշյուտային դեսանտի դեմ պայքարելու նպատակով։ Այս ամենը նպաստում էր կործանիչ գումարտակների մարտունակության բարձրացմանը, նրանց առջև դրված խնդիրների կատարմանը։

11 ՄԼԻ արխիվ, ֆ. 4033, ց. 6, գ. 122բ, թ. 8։

12 «Հուշեր մեծ հայրենականից», էջ 28—29։

13 Նույն տեղում, էջ 26։

Թշնամու դեպի Կովկաս առաջանալու կապակցությամբ խիստ աճեց նրա կողմից օդային դեսանտ իջեցնելու վտանգը։ Այդ առթիվ Անդրկովկասյան ռազմաճակատի հրամանատարությունը 1942 թ. հունիսի 1-ին հրաման արձակեց Անդրկովկասյան ռազմաճակատի տարածքում հակադեսանտային պաշտպանության (ՀԴՊ) գոտիներ ստեղծելու մասին։ Հրամանը պարտավորեցնում էր թշնամու դեսանտների դեմ պայքարի համար ՆԳԺԿ-ի ստորաբաժանումների, սահմանապահ զորամասերի հետ միասին օգտագործել նաև կործանիչ գումարտակները, ինքնապաշտպանության ջոկատները։ Կազմակերպվեց ծանուցման և դիտումների անընդմեջ ծառայություն, այդ գործում ընդգրկելով տեղի սովետական և կուսակցական ակտիվին[14]։ 1942 թ. հունիսի 8-ին 45-րդ բանակի հրամանատար, գեներալ-լեյտենանտ Ֆ. Ն. Ռեմեզովը հրաման արձակեց «Զգոնության բարձրացման, անհրաժեշտ ռազմական կարգ ստեղծելու, հատուկ ռազմական ռեժիմ հաստատելու և կարևոր ռազմական նշանակություն ունեցող օբյեկտների պահպանությունը ուժեղացնելու մասին»[15]։ Այդ հրամանում ասված էր, որ թշնամական տարրերը փորձում են կազմակերպել դիվերսիոն ակտեր և խուճապ առաջացնել մեր թիկունքում, չի բացառվում թշնամու կողմից օդային դեսանտ իջեցնելու հնարավորությունը։ Այդ նպատակով Երևան, Լենինական քաղաքներում և սահմանամերձ շրջաններում սահմանվում էր հատուկ ռազմական կարգ։

Ռազմական հրամանատարության ձեռնարկած միջոցառումները թելադրված էին ստեղծված իրադրությամբ։ Հանրապետության տարածքի վրա երևացել էին թշնամու ինքնաթիռներ։ Այսպես, 1942 թ. սեպտեմբերի 14-ի գիշերը գերմանական ինքնաթիռ երևաց Լենինականից 45 կմ հեռավորության վրա[16]։ Հոկտեմբերի 1-ին Երևանի վրա նկատվեց թշնամու մի այլ ինքնաթիռ[17]։

Բնակչության աջակցությամբ կուսակցական, կոմերիտական, սովետական կազմակերպությունների, կործանիչ գումարտակների և ՆԳԺԿ աշխատողների համատեղ գործողությունների շնորհիվ արագ կերպով հայտնաբերվում և վնասազերծվում էին թշնամու պարաշյուտիստները, դիվերսանտները, լրտեսներն ու քայքայիչ գործողություններ կատարողները, անողոք պայքար էր տարվում դասալիքների և բանդիտների դեմ։ 1942 թ. սեպտեմբերի 18-ին Սիսիանի շրջկենտրոնում կործանիչ գումարտակի մարտիկները բռնեցին թշնամու երկու պարաշյուտիստ-դիվերսանտների, որոնց մոտ հայտնաբերվեցին պայթուցիկ նյութեր և զենք[18]։

Թշնամու լրտեսների և բանդիտների խմբերի դեմ պայքարի գործում աչքի էին ընկնում Ախուրյանի, Ղուկասյանի, Հոկտեմբերյանի և այլ շրջանների կործանիչ գումարտակները, որոնք սերտ համագործակցած սահմանապահ ստորաբաժանումների հետ ակտիվ պայքար էին մղում սահմանը խախտողների, լրտեսների և բանդիտների դեմ[19]։ Նրանք պարբերաբար շուրջկալներ և «սանրումներ» էին անցկացնում բնակավայրերում, մերձակա դաշտերում և

---

14 Архив Министерства обороны СССР. ф. 400. оп. 9468, д. 23, л. 161.

15 Նույն տեղում, թ. 144—145։

16 Նույն տեղում, գ. 26, թ. 490։

17 Նույն տեղում, թ. 504։

18 Մշի արխիվ, ֆ. 1, ց. 30, գ. 48, թ. 211։

19 ՀՍՍՀ Հոկտեմբերյան հեղափոխության և սոցիալիստական շինարարության պետական կենտրոնական արխիվ (այսուհետ՝ ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ), ֆ. 113, ց. 4, գ. 348, թ. 61։

անտառներում։ Կործանիչ գումարտակները ակտիվ մասնակցություն էին ցույց տալիս նաև պաշտպանական ամրությունների կառուցմանը, որտեղ նաև անց էին կացնում տակտիկական վարժություններ։

ՀՍՍՀ Գերագույն սովետի նախագահությունը, հաշվի առնելով կործանիչ գումարտակների կատարած աշխատանքը թշնամու գործակալների դեմ մղվող պայքարում և թիկունքի ամրապնդման գործում, 1943 թ. դեկտեմբերի 19-ի հրամանագրով կործանիչ գումարտակների առավել աչքի ընկած մարտիկներին պարգևատրեց ՀՍՍՀ Գերագույն սովետի պատվոգրով և թանկարժեք նվերներով[20]։

Կուսակցական կազմակերպությունները ամենօրյա օգնություն ու ղեկավարություն էին ցույց տալիս կործանիչ գումարտակների աշխատանքներին, վեր հանում նրանց աշխատանքներում տեղ գտած թերությունները։ Օրինակ, ՀԿ(բ)Կ Երևանի քաղաքային կոմիտեն 1942 թ. հուլիսի 8-ին քննարկեց «կործանիչ գումարտակների աշխատանքների բարելավման միջոցառումների մասին» հարցը[21]։ Նշելով կործանիչ գումարտակների կատարած դրական աշխատանքը, քաղկոմը միաժամանակ նրանց գործունեության բարելավման միջոցառումներ մշակեց։ Նպատակահարմար համարվեց քաղաքի կործանիչ գումարտակները միավորել և ստեղծել կործանիչ գունդ։ Երևան քաղաքի կործանիչ գունդը ակտիվ մասնակցություն ցույց տվեց քաղաքի շուրջը կառուցվող պաշտպանական ամրությունների շինարարությանը։ ՀԿ(բ)Կ Լենինականի քաղկոմը ևս բազմիցս անդրադարձել է կործանիչ գումարտակի աշխատանքներին[22]։

Կործանիչ գումարտակների աշխատանքների վերաբերյալ հարցեր էին քննարկվում կուսակցության Կիրովականի, Ստեփանավանի, Սևանի, Դիլիջանի և մյուս շրջանային կոմիտեներում։ Կործանիչ գումարտակներն իրենց գործունեությունը շարունակեցին մինչև Հայրենական մեծ պատերազմի ավարտը։ Կործանիչ գումարտակների կազմակերպումը կարևորագույն պաշտպանական միջոցառում էր, որը զգալի դեր խաղաց թիկունքի ամրապնդման գործում։

МЕРОПРИЯТИЯ КОМПАРТИИ АРМЕНИИ ПО СОЗДАНИЮ ИСТРЕБИТЕЛЬНЫХ БАТАЛЬОНОВ И РУКОВОДСТВУ ИХ ДЕЯТЕЛЬНОСТИ (1941—1945 гг.)

А. О. ШАТВОРЯН

Резюме

В годы Великой Отечественной войны Компартия Армении явилась организатором и руководителем боеспособных истребительных отрядов и батальонов, создание которых в республике имело важное оборонное

---

20 Պարգևատրվածների թվում էին Միկոյանի շրջանի «Հաղթանակ» արտելի վարիչ Մ. Հ. Հայրապետյանը, Բասարգեչարի շրջանի Ակունք գյուղի գյուղսովետի նախագահ Գ. Ա. Բաղդասարյանը, Մարտունու շրջանի Վարդենիկ գյուղի գյուղսովետի նախագահ Հ. Հ. Սևոյանը, Բասարգեչարի շրջանի սննգառի մթերման լիազոր Հ. Ա. Թովմասյանը և ուրիշներ՝ թվով 52 հոգի։ (ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ց. 43, գ. 300, թ. 1—3)։

21 ՄԼԻ արխիվ, ֆ. 47, ց. 27, գ. 4, թ. 512։

22 ՄԼԻ արխիվ. ֆ. 46, ց. 5, գ. 230, թ. 108։

значение; она занималась комплектованием и подбором их руководящих кадров, боевой и политической подготовкой этих отрядов.

Истребительные батальоны параллельно с боевой учебой несли охранную службу важнейших промышленных и сельскохозяйственных объектов, активно участвовали в операциях по выявлению и обезвреживанию вражеских парашютистов, диверсантов, шпионов.

По инициативе объединенного штаба истребительных батальонов в республике было налажено производство некоторых видов боеприпасов (гранаты, бутылки с горючей смесью и др.).